

Իզմիրլի

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ազգային Քաղաքական և Գրական

10 ՓԱՌՍ

ձեռագիրները եւ չեն արժանանում

ՏԵՐԻՒՆԵՆ
ՅԱՎՈՐ Յ. ՇԵՔԵՐԵԱՆ

ԽՐԱԿԱՐԱՆՈՒՆ


Չուգուր խան, թիւ 54, Իզմիր

IZMIRLI

Journal Armenien

LITTÉRAIRE & POLITIQUE

Bureaux : Tchoucour han, Smyrne.



صاحب و مدیر مسؤولی

آغوب شكريان

اداره خانه

ایمیرده چقور خانه نومرو ۵۴

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԻԶՄԻՐԻ ՄԷՋ

Եւրոպայի օրերս «Դաշինք» ի շուրջ յարուցուած խնդիրները մէջ ալ ժամէութիւն կուտան այն հարցին թէ՛ լրագրութեան, կամ լաւ ևս օրաթերթ մը հանելը ի՞նչ կերպով պիտի իրագործել է իրագործել իզմիրի մէջ։

Եւրոպայի օրերս ինքի պէս քանի քանիներ իրենց մտաւարակեղ օրաթերթերուն պարունակութիւններուն անոնց գտած ընդունելութեանը ժողովուրդին կողմէ։

Հոս ջանանք պարզել զայն։ Սահմանադրութեան աւելի իրեն օրաթերթ ունէինք տարարարող Բարսեղ Գէլի զշեանի «Արշալոյս»։

Իրեն գաւառաթերթ «Արշալոյս» գերազանցապէս օրաթերթ եղաւ, թէ իր յօդուածագիրներովը և թէ իր թարմութեամբովը։ Գրաքննութիւնը որ հին ունէինք օրով աւելի սխալ էր Պոլսոյ մէջ քան թէ իզմիրի, աւելի թույլատու ըլլաւ։ «Արշալոյս» ի գրութիւններուն համար, այն քան իրեն օրաթերթը պարունակութեան մեծութեամբ յօդուածագիրները կրնային արձակ համարձակ իրենց տեղը ունենալ։

«Արշալոյս» մէջ։

Սակայն Օրմանեանի դէմ գրուած բոլոր ոճով յօդուած պատճառ եղաւ որ «Արշալոյս» զաղարման դատաւարութիւնը։

Ողբացեալ Գէլիեան ահագին ծախքերու ենթարկուեցաւ իր թերթին վերաբացման համար։

Եւրոպայի օրերս ինքի պէս քանի քանիներ իրենց մտաւարակեղ օրաթերթերուն պարունակութիւններուն անոնց գտած ընդունելութեանը ժողովուրդին կողմէ։

Հոս ջանանք պարզել զայն։ Սահմանադրութեան աւելի իրեն օրաթերթ ունէինք տարարարող Բարսեղ Գէլի զշեանի «Արշալոյս»։

Իրեն գաւառաթերթ «Արշալոյս» գերազանցապէս օրաթերթ եղաւ, թէ իր յօդուածագիրներովը և թէ իր թարմութեամբովը։ Գրաքննութիւնը որ հին ունէինք օրով աւելի սխալ էր Պոլսոյ մէջ քան թէ իզմիրի, աւելի թույլատու ըլլաւ։ «Արշալոյս» ի գրութիւններուն համար, այն քան իրեն օրաթերթը պարունակութեան մեծութեամբ յօդուածագիրները կրնային արձակ համարձակ իրենց տեղը ունենալ։

«Արշալոյս» մէջ։

Սակայն Օրմանեանի դէմ գրուած բոլոր ոճով յօդուած պատճառ եղաւ որ «Արշալոյս» զաղարման դատաւարութիւնը։

Թօշիկեան թէ՛ տնօրէն էր, թէ խմբագրատեղ, թէ խմբագիր, թէ ռիփօրթըր և թէ հաշուապետ։ Ինքն էր որ ամէն առտու առաջնորդարան կ'երթար, ազգային լուրերը ստանալու, ինքն էր որ գաղափարաւորութեամբ էր մինակ և ամէն օր լեցնել չորս սիւնակնոց օրաթերթ մը։

Թօշիկեանի մը գտնիկէն ասկէ աւելի բան սպասել կարելի չէր, և այդ իսկ պատճառաւ է որ «Արձագանգ» ի ամբողջ հրատարակութեան միջոցին հուլիսի մի քանի անգամ կը հանգիպէր Թօշիկեանի կողմէ ստորագրուած խմբագրականներուն։

«Արձագանգ» ի թէ միակ քաջութիւնն էր. . . մը ունեցաւ, այն ալ աս ու ան իրար ձգել և կամ այս ինչ կամ այն ինչ հաստատութեան դէմ ազգային յարձակում գործելն էր։ Թօշիկեան կ'ենթադրէր թէ՛ այս ու այն իրար ձգելով պիտի կարողանար ժողովուրդին հետաքրքրութիւնը շարժել և իր թերթին ապագայը շտապելով բաց չէր գիտէր թէ ասով առիթ կուտար որպէսզի հակահայանք մը գոյանայ Արձագանգի դէմ։

Բայ աստի, հարկ է արդիօք, յիշել թէ «Արձագանգ» իր այլքան խեղճութեամբ վիճակին չ'նայած, Ղեկնդեան ներուզանքին նման ինկած, ողորմելի և ազգամշտա դատի մը պաշտպան հանդիսանալ կը նկատէր։

Թօշիկեան յետոյ կը կը ջանայ շարունակել Գէլիեանի «Արշալոյս»ը։ Բայ ի՞նչ վիճակ որ ունէր «Արձագանգ»ը նոյն և ունեցաւ «Արշալոյս»ը։ Նոյն անհամ, խեղճկրակ պարունակութիւնը և պէտք է միթէ ըսել թէ այսպիսի պայմաններուն մէջ թերթ մը չէր կրնար շարունակուել։ Ի՞նչ որ ալ պատահեցաւ։

Թօշիկեան, հակառակ իր խմբագրի փորձառութեան, չ'կրցաւ առաջին օրէն ինքզինքն սիրցնել։ Չ'է մի որ արդէն ինքն ալ չէր գիտէր ժողովուրդը փայլապետ կերպով։ Թօշիկեան ապրելու պէտք ունէր, և ապրելու համար պէտք էր որ իր թերթը սպառում ունենար։

Արդ, ահա այդ սպառումն է չ'ունեցաւ «Արձագանգ»ը և անկէ յետոյ «Արշալոյս»ը։ Թօշիկեան, աս ու ան խմբագրութեան մէջ մէկտեղելով զէմ ձգելով, այսինչը վարկարկելով, այսինչը անպատուող յօդուածներ տպելով, թույլ տուած էր մեծ հակահոսանք մը կազմուել իր շուրջը։

Ասկէ գտաւ ժողովուրդը կարգաւոր բան մը չէր գտնէր անոնց մէջ, չէ մի որ Պոլսոյ օրաթերթերուն այսօր տպածը երկու օր վերջնորդութեամբ կ'արտատպէր Թօշիկեան գալով տեղական լուրերուն, բան մը որուն հոգի կուտայ իզմիրցին, Տաճկիւրէն կամ Յունարէն թերթերուն տալէն երկու օր վերջ միայն իզմիրցին պիտի կուտենար կարգաւոր իր Հայ օրաթերթին մէջ։

Այս պայմաններուն մէջ Թօշիկեան չէր կրնար շարունակել, և իրօք ալ չկրցաւ։

Թօշիկեանէ վերջ «Արշալոյս»ը քանի մը շարաթի չափ

սկսաւ հրատարակուել Գրաշարական Միութեան ջանքով, մինչև որ «Դաշինք»ը հրապարակ ելաւ։

Այնքան ատենէ ի վեր յեղիշուած և սպասուած «Դաշինք»ը վերջապէս հրապարակ ելաւ։

Սուրէն Պարթևեան, թերթին խմբագրատեղ, հիտուէն անառիկ բերդ մը կ'երևէր, և պէտք էր որ այդ բերդին անխառնքով մօտեցուէր։ Ուստի իզմիրցին պատրաստուած էր ամենահաճելի ընդունելութիւն մը ընել «Դաշինք»ին և իր խմբագրատեղին, անոր խօսքերը իրեն պատգամ մը ընդունել, վերջապէս դպուել փայլապետ թերթ մը որ Սուրէն Պարթևեանի մեծատունն էր. . . զանի գրէն կաթկըթող կայլակներով պիտի լեցուէր և պիտի կրնար Թօշիկեանի օրով օրաթերթերու երեսէն իզմիրցին կրած ցաւը մոռցնել տալ։

Բայց ո՞ր յուսալիտութիւն, հասկցուեցաւ որ Սուրէն Պարթևեան անառիկ բերդ մը չ'էր, որուն կարկնայիւր անխառնքով մօտենալ, այլ այն ալ պարզ մահկանացու մըն է որուն կարող եւ մօտենալ առանց էթիքէթի, և որուն հետ նոյն իսկ կրնաս շրջապայլ Ֆրանսական հիւպատոսարանին ետեւ փողոցներուն մէջ ատանց ալ և ալի։ Իրեն նախկին բարեկամներ։

Նիւթէս ակամայ չեղելու համար յարգելի ընթերցող և ունիւններու ներողութիւնը հայցելով, ըսեմ թէ «Դաշինք» ի ստալին թիւը լաւ տպաւորութիւն մը չ'ընդունց ժողովուրդին վրայ։ Իզմիրցին աւելին կը պահանջէր Պարթևեանէ, և պահանջելու ալ իրաւունք ունէր, այդքան աղմուկէ, ունեւած վերջ, ժողովուրդը գոմ իւր ֆօքս, բան մը կ'ըզէր։

«Բայց առաջին թիւն է, յետոյ կը շտկուի» ըսին շատեր և սպասեցին։

Երկրորդ թիւն ալ նոյնը եղաւ, երրորդն ալ։ «Աճեղդաներ», «Տարագրի մը Յիշատակներ» և տակաւին չ'գիտեմ ինչեր ողողեցին հրապարակը։

Իզմիրցին քաղաքական լուրեր կ'ուզէր Պարթևեանէն, Պարթևեան ի պատասխանի հակադեմոկրատիկութիւնը կը քաղուէր։ Իզմիրցին տեղական լուր կը պահանջէր Պարթևեանէն, անիկա հարուստ դասակարգի շահերը պաշտպանելով ընկերակարակաւութիւնը վար կը զարնէր։

Իզմիրցին թարմ հեռագիր կուզէր, իսկ «Դաշինք»ը երկու օրուան պայաթ, մեղմած հեռագիրները տպելով, անդին սակայն չէր մոռնար այս ինչ կուսակցութիւնը ոճաբարձր անուանել։

Եւ գիտէր ի՞նչ պատահեցաւ։

Իզմիրցին, որ ո՛չ յեղափոխութեան և ո՛չ հակադեմոկրատիկութեան հետ գործ ունէր, որ ո՛չ իր հարուստները կատարէր և ո՛չ ալ իզմիրի հարուստները կ'ատէին աղքատը, իզմիրցին կ'ըսէ, «Դաշինք» ի երևումով դատապարտուեցաւ Կիւրճեան, Մալեգեան, Պարթևեան քիւրճեան պոռնիստութեանը իր ականջները լեցնել։

ԶՄԻՐԻԻ ԹԵՐԹԵՐԸ

ՏԻԿԵՆ ՎԱԹԻԷ

ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ

Ա

Եւրոպայի օրերս ինքի պէս քանի քանիներ իրենց մտաւարակեղ օրաթերթերուն պարունակութիւններուն անոնց գտած ընդունելութեանը ժողովուրդին կողմէ։

Հոս ջանանք պարզել զայն։ Սահմանադրութեան աւելի իրեն օրաթերթ ունէինք տարարարող Բարսեղ Գէլի զշեանի «Արշալոյս»։

Իրեն գաւառաթերթ «Արշալոյս» գերազանցապէս օրաթերթ եղաւ, թէ իր յօդուածագիրներովը և թէ իր թարմութեամբովը։ Գրաքննութիւնը որ հին ունէինք օրով աւելի սխալ էր Պոլսոյ մէջ քան թէ իզմիրի, աւելի թույլատու ըլլաւ։ «Արշալոյս» ի գրութիւններուն համար, այն քան իրեն օրաթերթը պարունակութեան մեծութեամբ յօդուածագիրները կրնային արձակ համարձակ իրենց տեղը ունենալ։

«Արշալոյս» մէջ։

Սակայն Օրմանեանի դէմ գրուած բոլոր ոճով յօդուած պատճառ եղաւ որ «Արշալոյս» զաղարման դատաւարութիւնը։

(1)

Եին որ ժամացոյցին ճոճանակներն իսկ ժամանակ չէին ունենար երկար միջոց մը վազելու։ Թուատախտակին վրայէն։ Յետոյ, անհամբերութեամբ անուր այս մարդը՝ որուն հետ կը բախտէր, վերադառնալու իր նախկին դիրքը։

Ժամը երեքը քառորդ անցած էր։ Բալապան մը կամաց մը դուռը գարնելէ ետք գայն կէս մը բանալով ըսաւ.

— Մ. Վիթթոր Տօպրայ։

— Ո՞վ է անի, պատախաճեց հատուածապետը, բարկացած, այս ժամուս մարդ չեմ ընդունիր, մանաւանդ այսօր։

— Մ. Տօպրայ նամակ 'ը ունի իր հետը, որ կուտայ գինք Ձեզ տեսնել, աւելցուց բարապանը խոնարհութեամբ, եւ մէկդի քաշուելով, նամակը

տալու անունը տուած երիտասարդին, որուն ետեւէն վերադառնալու գոցեց դուռը։

— Իրօք անտանելի է այս, մըթմըթիսց հատուածապետը, այսպիսի օր մը այցելու թիւններ ընդունիլ . . . Է՛հ չաւ, յարեց, կոշտապէս դառնալով Մ. Տօպրային։

— Ի՞նչ կուգէք պարոն։

Երիտասարդը այլայլած, հացիւ թէ կրցաւ ներկայացնել նամակ մը, որուն վրայ պաշտօնատարը աղագ ակնարկ մը նետելէ վերջ, ըսաւ.

Ա՛հ այո՛, Պերթիի բարեկամիս կողմէն կուգաք։

— Այո՛ պարոն, պատախաճեց երիտասարդը, որուն դէմքին վրայ ժպիտ մը փրթեցաւ, տեսնելով որ այն բարձրաստիճան անձնատիրութիւնը,

որուն կը ներկայանար, մեղմացած կերեւար։

Վայրկեան մը յուսթիւնը տիրեց։

— Եւ ի՞նչ կը փախաքիք, հարցուց հատուածապետը։

— Եթէ կարելի է, պարոն, գործ մը պաշտօնարանին մէջ, որքան չընչին որ ալ ըլլայ . . .

— Երազէն իսկ աւելորդ է։ Արդէն սեղաններուն ամենքն ալ խոնարհուած են, ասկէ գտաւ միայն ազնուապետական տիտղոսներ ունեցողներն են որ կը ընդունուին։

— Շեկացորդներու սպայի մը գաւառակ եմ, հայրս ծառայած է Ֆրանսայի, երեսունը երկու երկար տարիներ։ Մեծ հայրս նոյնպէս ծովային տեղակալ մըն էր . . .

(Շարունակելի)

Մինչև Պարթևեանի գալուստը, Իզմիրի հարուստ կամ հայ-լալի գաղափարը գաղափար իսկ չ'ունէր յեղափոխութեան, հակադատութեան, ընդերկարականութեան և գաղափարի վրայ: Իզմիրի հարուստը ո՛չ իսկ զէշ աչքով կը նայէր միջակ կամ ախտաւոր գաղափարին վրայ:

Բայց քանի Պարթևեան, Մամուրեանի միջոցաւ իր լիբերալութեան հայ-լալի շրջանակէն ներս, քանի հայ-լալի մի քանի երիտասարդներ Պարթևեանի շուրջէն չ'ըստեմանելով, զայն կէս մը աստուածացուցին այժմ, աստուածացուցին բուն բանն է, այն աստիճան սերտ կապուած էին էքս-յեղափոխականին հետ, այն աստիճան խրամատ մը բաց-ուցուցաւ: Իզմիրի նոր սերունդին պատկանող երիտասարդութեան և հայ-լալի կամ գաղափարիստ կոչուած գաղափարին միջև:

Պարթևեան իր բանաստեղծութիւններով ալ աւելի ընդարձակեց այդ խրամատը և նոյնը չ'է որ կը շարունակէ նաեւ «Դաշինք» ի մէջ, բան մը որ կրնայ պարծենալու առիթ ըլլալ նոյնական յեղափոխական և այժմու հակադատութեան Պարթևեանին:

«Դաշինք» թէ և այս ու այն իրար ձգելու քաջութիւնը չ'ունեցաւ, բայց ասոր փոխարէն ժողովուրդը երկու մասի բաժնելու իշխաւորութիւնը ունեցաւ, ինչ որ մեծ բան մ'է իրեն համար:

«Դաշինք» ի մէջ գրեթէ ամէն օր կը հանգիստնէր երկու Ազեքսանդրիանով զբաղեցնելու Վահան Մալեգեան և Մ. Ս. Կիւրճեան: Այդ պարտնէրը որոնք յեղափոխութեան հետ դո՛ւրս ունեցիր են եղեր հիմա ձանձորովը շառնին ամեն օր մեր գլուխը արգելելու իրենց հայ-հունիկովը:

Այդ պարտնէրը պէտք է լաւ գիտնան թէ՛ յեղափոխութեան հետ իրենց ունեցած ձորձը ուրիշ տեղ լուսնի Իզմիր ոչ յարմար վայրն է և ոչ ալ Իզմիրցին տրամադրութիւն ունի իրենց շանքարոզները մտիկ ընելու:

Դաշինք «Դաշինք»ին անփա ՊԼԸՖ մը եղաւ և այնպէս ալ պիտի շարունակուի:


Պարթևեան կրնայ շատ մեծ գրադէտ մը ըլլալ, սակայն երբէք խմբագրագետ մը:

Առաջնորդը մը գրելով օրաթերթ մը չ'ընցուի, պէտք է նաեւ մտածել անոր շաղակին վրայ: Բազմապիսի, առեւտրական և հեռագրի բաժնէներուն վրայ: պէտք է շատ ժողովուրդին թարմ լուրեր տալու, պայմաններ որոնց բոլորն ալ կը պակսին «Դաշինք»ին մէջ:

Արգարե Խոջ Կուզէ Իզմիրի ժողովուրդը, օրաթերթ մը որ կուսակցական չ'ըլլայ, որ ունենայ երկու սիւնով գրական բաժին, սիւնակ մ'ալ քաղաքական, սիւնակ մը երգիական և սիւնակ մ'ալ առեւտրական բաժին: Պէտք է աւելցնել նաեւ երկու սիւնակնոց Ազգային բաժին մը և չորս սիւնակ Արտաքին, Ներքին և Տեղական լուրեր և վերջապէս հեռագրական բաժին մը:

Թերթ մը որ այս ուղղութիւնով կ'սկսի և կը շարունակէ ալ, թերթ մը որ չ'աշխատի թշնամութեան որո՞մ ցանկ ժողովրդային խաւերուն մէջ, թերթ մը վերջապէս անճանաչողութիւններէ և կուսակցութիւններէ շատ-լուրեր, որ աս ու ան իրար չ'ըզէր, որ ամենուն հետ հաշտ կ'ապրի, որ ամենն ալ կը փայտի, և որ իրեն նշանաբան ընտրած է միմիայն ժողովուրդին շահը մտածել, ապա իր թերթերն են որ կը յաջողին Իզմիրի մէջ և ո՛չ ապա-քէն ապա իրենցը պիտի ըլլան խռատ օրաթերթեր, օրաթերթեր զորս տարիներով խախտած և փնտած է Իզմիրցին իղուր:

Տ. . .



ՆՈՐ ՏԱՐԻՒՆ ՍԵՄԵՆ

Վերջապէս աւ 1909 ի անիծեալ սեւ տարին ալ անցուցինք . . . : Սուլուի եւ արհաւիրքներու, խողխողումի եւ սրածուրի այս տարին ալ կ'երթայ համագային պատմութեան մէկ նոր էջը ար-խանուցու:

Սարսափէ ցատ ոչինչ տեսանք կարծեմ անցնող տարին մէջ, եւ Աստուան, արիւնի եւ արցունքի այդ նոր հովիտը, յանկերգ եղաւ մեր ընկնուածի եւ կործանուածի բերաններուն:

Կիչիկեան արհաւիրքը այն կարմիր շարժապատ-կերը եղաւ որ մեր Ասիականադրական ազատ արեւու մը տակ նորաբաց աչքերուն առջեւ կրկին պը-տցուցուց Բռնութիւնը՝ իր կատարելութեան մէջ:

Անցեալը թող երթա՛յ բարով, ու թող մեզի չ'ի-ճակի տեսնել անգամ մընայ Բարբարոսութեան կարմիր գազանին վերականգնումը:

Նոր տարին սակայն բոլորովին նպաստաւոր եւ

յուսատու, պայմաններու տակ չէ որ կը ներկայա-նայ մեզի: Յոռեւտարութիւն կամ ոչ, դժուար է կարծեմ հիմակուց Սպանական դիտակներ չ'ընելու: Ելլէ 1910 ի համար: Ոսկի երազներու դարը շա-տունց անցեր է . . . :

Դուրեան Սրբազան տակաւին չէ բազմած իր աթոռը, հակառակ անոր որ Հագգը փաշայի նոր դահլիճը կարելին ի գործ դնել կը խոստովանի, ձեռք ձգելու համար ինչ օրերու համաձայնութիւնը:

Սրտադին կը մալթենք այս միութիւնը, սպա-նացով արդիւնքին, թէեւ կասկածով, քանի որ Թուրքիոյ մէջ ընդհանրապէս գործէ արեւի, խօսքն է որ մեր աչքերը կը չցանցն:

Զրաշանի հոյակապ պաշտոնին հրդեհը իրօք շատ ցաւալի մօթ մընէ որ կուգայ նոր տարին առա-ջին օրերէն իսկ մեզի զբաղեցնելու, բայց ճամար-տապէս անճամաղդակեան երկրի մը համար ի՞նչ կա-րեւորութիւն մը կրնայ ունենայ այսպիսի կո-րուստ մը:

Կը ցուցնէ միայն եւ կանգնինք: Ազգը թող կանգ-նէ արեւի յարմարագոյն շէնք մը, հաւաքելու, հա-մար ամոր մէջ այն մարդերը՝ որոնք պաշտօն ունին վանելու իր ճակատագիրը:


Տարակիտ չ'իկայ թէ նոր տարին ընթացքին մենք շա՛տ, շատ անգամներ տակաւին առիթը պիտի ունենանք անդրադառնալու մեր որբերուն շուրջը:

Պատճառները եթէ վերցուած են, արդիւնքները կը մնան: Եթէ Բռնապետութիւնը մեռած է, Ասա-նայի խեղճ որբերը կ'ապրին . . . :

Ուրախացի պարագաներ են արդարեւ ամեն կողմ կազմուած «Որբախնամ» ներք, սակայն եւ այնպէս մենք տակաւին անտեղիտացի պէտք ունինք, գտնելու հասցի մը, չի շահագործուած աղբիւր-ներ, թէթեցնելու, աւ նպաստահաւաքութեան այլ եւս զգուշի բեռը:

Երանի թէ այս տարին, գէթ մատով մը ծածկէր իր նախորդին ամօթը, մեղմէր կիչիկեան Թարախոս վէրքին կոտորածները, եւ ոգեւորէր, հրաճէր մեր կուրած ու յուսաբէկ սրտերը:

ՄԻՀՐԱՆ, ԹԱԳԻՈՐԵՆ



ՔՐՕՆԻԿ

«ԱՐՈՒԵՍՏԱՍԻՐԱՑ» Ը

Անցեալ կիրակի, քաղաքիս Հայ Արուեստասի-րաց խումբը տօնեց իր անդրանիկ տարեդարձը, Մետրոպոլիտան վարժարանի վերի սրահին մէջ:

Հարկ չըջար կարծեմ սրահին ամբողջապէս չի ջլջալը շէշուելու, երբ արեւցնէ թէ մուտքը ձրի էր:

Ներկայացուիւն անցնէլէ առաջ, քանի մը խօսք պիտի ուզէի քսել «Արուեստասիրաց» մասին:

Անցեալ տարի, Ազատութեան առաջին գինով օ-րերուն, հոն հոս երեսացող անթիւ անհամար ձեռ-նարկներու պէս, քանիմը սրտոտ եւ ազգասէր երի-տասարդներ կը կազմակերպէին Հ. Յ. Դ. Թատերա-սիրաց խումբը՝ որ քանի մը ամիս ետքը կը մը-կրտուէր «Հայ Արուեստասիրաց խումբ» անունով:

Հակառակ ներկայացող բազմապիսեանց դժուար-ութիւններուն եւ անտեսուած արգելքներուն, այսօր ուրախ ենք տեսնելով որ այդ պատուական կորիւնները, առանց թուլանալու, իրենց էն առաջին խանդով եւ անկէ արեւելով իսկ, փարած են իրենց հանրօրոտ ձեռնարկին: Շնորհաւորութիւններս խումբին ամբողջ անհատներուն:

Ի խօսք մըն ալ, եթէ ներելի է: Այս ուրախասիր ձայնիկեաններուն սիրտը կէտ մը, աչքի ցարձոյ պարագայ մը կը զբաղեցնէ զիս: Այն է, թէ ի՞նչու այս պատուական խումբը զրկուած ըլլար դերա-սանուհիներէ: Իզմիր արդեօք չ'իջի իր կրնայ տա-կաւին տալ այս խումբին իրեն պէտքական օժան-դակութիւնը, իր էն օգտակար աջակցութիւնը, այն է հայթայթել «ամաթօր» ունիներ:

Միայնակ իւր յուսանք:

Այսպիսի բաւ համարելով խումբին կազմակ-պութեան մասին կանգնել կիրակիի հանդէս - ն կայացուիւն սեղեկատուութեան:

Նախ ներկայացուեցաւ. — երկրորդ անգամ ըլ-լով — «Տօթթօր Թաթու» զարեշուք, որ չեմ գիտ-ի՞նչու. հակառակ յաջող անցնելուն, առաջին գալուստն տպաւորութիւնը չըրաւ: Թերեւս անչ-մար բեմին էր յանգանքը:

Զարեշուք յաջորդեց Պ. Յ. Յովհաննէսեան՝ երկու գեղեցիկ մենախօսութիւններով, երկու մէջն ալ յաջող: (Պ Յովհաննէսեան Թերեւս աւ-յաջողութիւններու արժանանայ, եթէ աշխատի ք-մը մեղմացնէ իր խոտո, նաշուածքը եւ սրանե-ծի կանոնս կերպարանքը):

«Արուեստասիրաց» ռ. է թ ի ս օր ի ն՝ Պ. Յ. շահանքին էր կարգը իմա հանրութեան ներք յանցնելու համար խումբին տարեկան տեղեկագ-րու հաշուեկշիւը, որ կարճ խօսքով ցոյց կուտար ոսկիի մօտ բաց մը:

Կարելի չէ սակայն, աննշար անցնէլ յարգելի բաւանապետին գործածած քիչ մը խիզախ ու եւ ինքնակին վրայէն՝ որով ան յարձակեցաւ. ն կաներուն վրայ, պախարակելով իզմիրցիներ անտարբերութիւնը թատրոնի հանդէպ: Ուղղուն շանքարոզ թող ըսեն, ուղղունքը՝ գալլի աւետարա-նչ որ ներկաներէն կարող էր պնդել հակառակը փխաւեանի ըսածներուն:

Տեղեկագրէն վերջ, հանելի անակնկալ մը ներք ներուն: Հայ Դերասաններու Ընկերակցութե տալանդաւոր անդամներէն Պ. Շահինն էր որ, պ տալանդեղով խումբին հրաւերին, կուգար իրան լիթեն պատկերացնելու մեզի Վարպետ Ժանը, Յ րանսուս Գօլփէի «Դարբիններու Գործարար»:

Հանդէսը կը վերջանար «Դերասան» ով, ս րամախօսութիւն 2 արար, հեղինակութիւն Պ. Յ րութիւն փխաւեանի: (Այն եւս ի՞նչու զրկել իր հեղինակի իր արդար իրաւունքը):

Թատրերգութիւն մը չէ «Դերասան» յ, ինչա արդէն հեղինակը կը խոստովանի, երկու արդ ուսնով տրամախօսութիւններու շարք մ'է, նա տակ ունենայով դերասանը հոգեբանութեան ներկա-ցնէլ իր գերադաս գեղարուեստի միւս ճիւղեր ներկայացուցիչներէն:

Կը շնորհաւորենք Պ. Փխաւեանը իր այս ա նիկ գործին համար, թէեւ իրեն հետ չընդո-թէ նկարիչ մը, խմբագիր մը, արձանագործ ս րանաստեղծ մը իր կարծանքին չափ վար մնա-րասանէ մը:

Հեղինակը, խաղին մէջ նորէն առիթը գտա-անգամ մ'ալ քանի մը նախընթաց ակնարկութ-ներ նետելու իզմիրցիներու թատերական ան-բերութեան, դերասանին բերնով բացատրելով այն տիրացուական վարմանը՝ զոր տակաւին բաղդարար կը տածենք դէպի մեր թատրոնը:

Պ, փխաւեան թող ներք մեզի իրեն դիտել տ-թէ, մեծապէս ազդուած կերելի, թէեւ անգգայա-օտար հրաշակերտներէ: Այսպէս, օրինակի հա-իր խաղին առաջին մասը անխոսափելիորէ շիջեցնէ Կէյի «Թրիլլի» ին արհեստանոցը, եւ ճ չըջը Արթին Աղա՛ն, իսկ վերջին դերասանն «Շէրքը Զոլմա» ի երրորդ վարպետի ճերմակ Սալաքին հրաշալի ծպտումը:

Յետոյ, չ'իլլը անք տրամաբանօրէն ընդուն-իւն պէս կըլլայ որ որեւէ ոտիկանապետ մը մ'անայնի որպէսզի երկու մարդասպաններ տ-իր մէկ բարեկամին տունը:

Անքանական, անօր մ ա չ, կէտ մընէր այս պէտք էր խոսափէր հեղինակը: Գեթ, առաջ նեղու համար, երկրորդ արարուածը բանտի ներկայացնելով:

Աւելի յաջող եւ կատարեալ գործեր սպասե-մեկտեղ Պ. Փխաւեանէ, քանի մը խօսք ալ միւ դերակատարներուն:

Պ. Տեղեկեանն արեւի շաւ կընէ եթէ չի ջանա-կապել Պ. Զարիֆեանի ժաշինն ելեւէջները, ոչ ալ ուսանայ չեղուն խորթ հնչումները: Պ. Շ-

րիտանան գէթ այս անգամ դուրս պետք էր գար Չարքընը Արթին Աղայի իր թիֆիս կեղեւեն: Տարբեր կերպարանքով մը պիտի սիրէինք տեսնել գինք իբր կարապետ էֆենտի:

Միւս Դերակատարները կրնանք ըսել թէ չաւ կատարեցին իրենց դերը, եթէ նկատի առնենք բեմին պզտիկութիւնը եւ անյարմարութիւնը:


Վերջացնելէ առաջ, անգամ մըն ալ շնորհաւորութիւններս եւ անկեղծ ծափահարութիւններս Արուստասիրացին, սրտագին մաղթանքներովս, դէպի իրենց խեղճ արագ յառաջդիմելու համար:

Իրենց նոր պարզած, թատրոնի մը շինութեան ճրարքին մասին կը խոստանամ ուրիշ առթիւ իմ հայեց սկիտներս պարզել:

ՌԻՏՈՐԹԸՐ

Յ. Գ. Կը շնորհաւորեմ նաեւ նուագախումբը՝ որ միջնարարներուն այնքան յաջողապէս մեր վրայ տպաւորեց: Փափաքելի է որ այդ խումբն ալ կամայ կամաց ընդարձակէր այլ եւս քիչ մը պայա թցած իր խաղացանկը:

ՆՈՅՆ



ՕՐԸ ՕՐԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐժԱՐԱՆՆԵՐՈՒ ՊԻՏՅՃԷՆ

Ահա խնդիր մ'ալ որ մեր գանազան մտազբաղումներուն մէջ կուգայ իր վրայ խօսեցնել տալ:

Օրումս հարցը ոչ Հազգե փաշայի եպարքոսութիւնն է եւ ոչ ալ նոր երեսգող գիւսարարատը:

Ազգ. վարժարաններու պիւտնէն, բոլորէն ալ կը խլէ առաջնութիւնը, կիներէն կը խլէ իրենց գիշերուան քունը, ամուսիններէն իրենց պարապոյ ժամերը, վարժուելիներուն աչքէն կը խլէ իրենց մուշիկ մուշիկ քունը իսկ վարդապետները օրը մի քանի անգամ էրուարդից մոմ վառեն այդ պիւտնէին խնդրին համար:

Բայց ինչ է եղածը: ոչինչ, ոչինչ, նորէն ոչինչ, ինչպէս որ պիտի ըսէին Վահան Պաշապանեան կամ Տիգրան Տօնիկեան բարեկամներս: Վարժարաններու պիւտնէն 500 ոսկի բաց մ'ունեցիր է, 500 ոսկի ոչինչ բան մը, կաթիլ մը ջուր հսկայ ուկեանին մէջ, կ'արծէ՞ միթէ անոր խօսքն անգամ ընել:

Բայց եկու տես որ մերիները գործը սէր ինչօրի արար են, այն աստիճան որ Տօնիկեան հրաժարելու ելան, քաղաք. ժողովը գործը Ազգ. ժողովին յետմէն ընդուն, իր իրաւասութենէն վեր նկատելով զայն, ազգայիններին մէկը սկսաւ ասելին անդին զօռալ կանչել թէ ինչո՞ւ համար վարժապետներուն ամուսկանը կ'աւելցնեն, «Դաշինք», երանելին «Դաշինք» ձեռքի տակ է եւ սա մ'ան ալ թիցնտան սկսաւ կամ թել Ուսումն. խորհուրդը, 500 ոսկի բաց ունենալուն համար:

Ահաւասիկ, սիրելի ընթերցողներ, ամբողջ թոճորոն մը, որ շատ աղմուկ ունեցաւ եւ սակայն արթիւնք ոչինչ:

Ազգ. ժողովը վերջապէս ուզէ չ'ուզէ պիտի ընդունի 500 ոսկի յաւելումը, քա՛նի որ ուսումն. խորհրդոյ անդամները ոչ ձեպէն ինչ պիտի դնեն այդ դրամը, ո՛չ ալ մասնագէտ պիտի տան, եւ անոնք որ կը պոռային կանչէին թէ՛ պետք է ընդունիլ բացը, թէ՛ ուսումն. խորհուրդը յանգաւոր է ամասկանները աւելցուցած ըլլալուն համար, անոնք կ'ըսեմ, այդ բոլոր վայրահանները թրջած հաւերու մ'ան տեղերնին պիտի նստին եւ բերանին


գոցեն, իսկ անդին Ասպետ Պուպլի պիտի կրնայ պարծանօք յիշել թէ՛ ազգը չաւ կը վարժարան իր ուսուցիչները, եւ թէ՛ Ազգ. վարժարաններու մակարդակը երկու մէթրօ եւս աւելի բարձրացիր է իր նիւ մակարդակէն:

Բազում աղմուկ, վառն ոչնչի, չէ՞ մի որ մեր ազգ. բոլոր գործերն ալ այս ընթացքով կը քայլեն:

Մէկը մէկ կողմէն կը քայլէ, միւսը միւս կողմէն, սակայն արմատը, գործը, արդիւնքը միշտ կը մնայ նոյնը, միշտ առաջնաւն:

Ծիծաղելի չ'է այս. . . :

ԿՐԻՉԷԹ



ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԷՆ

Պատերու վրայ փակցուած ազգարարութիւններէ կը տեղեկանանք թէ, վերջերս Պոլսոյ մէջ այնքան ջերմ համակրանքի արժանացող հոգեւորաւոր հայագէթի երիտասարդ չուժակահար Պրն. Հայկ Կիւտէնտան, մօտ օրէն Իզմիր կը համար, տալու համար միակ նուագահանգէս մը:


Եթէ չ'ենք սխալիր. չորս տարի առաջ էր որ Պրն Կիւտէնտան առաջին անգամ եկաւ Իզմիր. և իր գոտած սրբալիք ընդունելութենէն խրախուսուած է որ դարձեալ կը մտադրէ մեզի հմայել իր չուժակով:

Փափաքելի էր որ այն տաղանդաւոր պէն, նորէն այս անգամ ալ քաղաքիս ազգասէր ծանօթ և ակոնաւոր Տիկիները չի վրանային իրենց օժանդակութիւնը:

Յաջողութիւններ կը մաղթենք մեր երիտասարդ հայրենակցին:

Սբօթիկի մէջ այս տարի նորէն Մ. Լուի Կարտէի վարչութեան տակ գտնուող «Բարիկ-Թատրոն» թատերախումբը իր այս տարուան կանոնաւոր շրջանը կը բոլորէ Իզմիրի մէջ ամենամեծ յաջողութիւնով:

«Բարիկ-Թատրոն» ընկերակցութիւն մըն է, որուն անդամները հաւաքուած են Բարիկի զանազան թատրոններէն: Մ. Կարտէ ընդհանրապէս իր անուանադիր կարողութիւնով գերասան մը այս թատրոնէն, գերասանուհի մըն ալ միւսէն ժողովիով այսպէս քանի մը տարիներ է որ սկսած է Արեւելքի մէջ յաջող շրջաններ անցնել, ամեն տարի: Եւ իրօք ինչպէս կ'ուզէք որ այսպիսի խումբ մը լեցուն արտ' մը չ'ունենայ, երբ կը ներկայանան, օրինակի համար. «Սթէյնհալի. Դատը»-ին պէս ժամանակակից և իրական թատերախաղ մը. . . :



ՄԻՄՈՍԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՆ

Առանց կատակի. Հրաշալի մարդեր ենք մենք պարզապէս: Ինքզինքնիս առանց խաբելու. քաղաքակիրթ եւ քաղաքավար անձնաւորութիւններու տեղ քշելու. կաշիստինք օտարներուն, այնպէս, ինչպէս որ միամիտի մը պիտի չ'անայինք կշեցնել ոսկեցո՞ծ թունաւոր դեղիստ մը:

Աղբարներ, ո՞ւր էր մեր քաղաքակիրթութիւնը, ո՞ւր էր մեր կենցաղագիտութիւնը, ո՞ւր էր մեր քաղաքավարութիւնը, ո՞ւր էր մեր կրթութեան երիտասարդութիւնը:

Գալ եւ անցեալ կիրակի տեսնել պետք էր Արուստասիրացի թատրոնին, ուր հակառակ խեղճ Բիլաւեանի թափած խրատներուն կային խումբ մը երիտասարդներ, զիւր պիտի չ'ենէր, հարկ թանէր, զէվ զէվ եւ արեւելի ճիշտը, (անունները հոս զանց կ'առնենք յիշել) որոնք ինքզինքնին իրենց ակունքին մէջ կարծած էին պարզապէս:

Թատրոն տեսնալէ աւելի, խանգարելու եկող այդ պարունները, արդեօք աւելի չաւրած չ'են ըլլար ճետերնին մէջմէկ հատ ալ նարկիլ է, մէկ երկու թափիլ ալ բերելով:

Ամօթ մի կըսէք: Այդպիսի բառ մը գոյութիւն չունի այդ երկրամի . . . Առանակներուն բառարանին մէջ: Եւ ի՞նչպէս կուգէք որ խալին այդ երանելի. . . պիղ պրեկները, որ երբ իրենց

դիտել տրուեցաւ. թէ ընծ խայտառակութիւններն «ամօթ» է, եւս առանց նայելու. չորս կողմի տիկնաներուն եւ օրիորդներուն, պոռոտախօս բացարեցին ամօթին. . . ուր գտնուիլը:

Մօռ է աչք օչսուն. . . :

Ասոնք ե՛ն որ այն պիտի դնեն մեր ապագայ սերունդին մէկ մասին ճիւղերը, այս երիտասարդները, որ երբ իրենց առջեւ մէկ երկու կին կամ աղջիկ տեսնեն, կսկսին ճիւղի պէս. . . պաղիլ եւ պարզապէս. . . պիւր պիւր կը կտրին: Կը խօսին ու կը խախին, պաղ պաղ կը խօսին, անյարմար խօսքեր կը նետեն անոր ասոր, սիւլիւ կի պէս կը փակչին գիւղերը հագ չ'ընողի մը օձիքին ու հարկ կը նետեն չորս կողմի. . . նազեւաշուքներուն:

Բայց, պիտի ըսէք, քեզ՞ի ինչ, այսպէսով պիտի կրնաւ անմիջ. բերել գիւղերը: «Ի՞նչ խրատն ի՞նչ ընէ, սեղ սալօնը ի՞նչ ընէ»

Իրաւունք ունիք. սակայն ինչ ընեմ որ չեմ կրնար կոր զսպել ինքզինքս, մէկ երկու խօսք ըսելէ այդ պարապ վերնատունով. . . ճակարկաններուն:

Աս այժմ այսպա՛մ:

Լսելու, ախանջ ունեցողը թող չսէ:

ԸՆԿԵՐ ՄԻՄՈՍ

ՀԵՌԱԳԻՐ

«ՌԵՊՈՐՏ» ԷՆ

Կ. Պոլիս 29 Յունիս

— Խորհրդարանի այլման առթիւ եղած խորտ քննութիւններու հետեանօք շատեր ամբաստանութեան ենթարկուեցան:

— Բարիկի վերջին շուրթը կը ծանուցանեն թէ՛ յորդած Սէն պետի շուրթը հեղհեղէ կը ցածնան:

— Ֆինէրի կացութիւնը նոյնն է, կը յուսացուի սակայն հաշուութեան միջոց մը գտնուի:

— Ջրոյ կը պըտըտի թէ, նախկին դահլիճին կողմէ խմրալուծած նոթան, կրեւելի խնդրոյն առթիւ պաշտպան տէրութեանց չը պիտի մատուցուի:

Հազար փաշա, Բ. գուռը մտածութիւն տալէ վերջ զայն անօգուտ կը նկատէ:

«ԱՄԱԼԹԻԱ» ԷՆ

«Մանուկներէ Եթեար» (Գ) մէկ յօդուածին մէջ, երեւի փոխան Պուշո պատրաստակամութիւն կը յայտնէ կրկին և կրկին ստորագրելու պատերազմական Ատեան հրաւիրող կոչանագիրը. որովհետեւ քաջ վատահ է թէ, պիտի կրնայ եղեր տպաշուքանել, շատ մը նշանաւոր երիտասարդ թիւրքերու կրեւելի Յունաստանի կցուիլը, փափագող ըլլալին:

ՀԱՅՐԵՆԻՔ

Գրական, Հասարակական եւ Քաղաքական

ՇՐՈՒՄԱԹԵՐԹ

11 րդ տարի

Տարեկան 10 Փր. — Վեցամսեայ 6 Փր.

Հասցէ՝ ՀԱՅՐԵՆԻՔ ԲՐԷՍ

Նոր Սթրիթ Պոսթօն (Ամերիկա)

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Բարոյական, Ուսումնական Արուեստագիտական

24րդ տարի

Տարեկան 15 Փր. — Վեցամսեայ 8 Փր.

Հասցէ՝ Չմիւնիոյ Միթիթարեան վանատունը

Եթէ կարի մեքենաներնդ գո՞ծ չէք, եւ կուգէք զայն ծախել, պատրաստ ենք բուն գինէն քիչ զեղջով գնել: Ունինք ձեռքէ անման մեքենաներ ալ, որոնց համար կ'երաշխաւորենք մէկ տարի:

Կը նորոգենք ու կը մաքրենք առանց վարձքի: Ստակի պէտք ունեցողներուն մեքենաները գրաւի ալ կը նորոգենք:

Քէչեմիլեր Իլի

ՄԱԿԻՆԻՍ ԳԵՂՐԳ

Երեք տարի է որ երգնակայն հոս եկալ բարեպաշտ ազգայինի եր քով կաշխատէի, այսօր գործէ դադարած ըլլալուս, կուգեմ նորէն պատուաւոր ու բարեպաշտ ազգայինի մը քով աշխատիլ, ամեն ծառայութեան պատրաստ եմ, թէ տան եւ թէ՛ չուկայի Տարիքս 18: Հմայեակ Տ Երջկիլեան

ԿԱՐԵՒՈՐ

ԿԸ ՓԵՏՈՒԻ

Կը փնտռուի. 350 ոսկի արծաթեալ տուն մը Հայնոցի եւ կամ Զայ Թաղերու մէջ: Թիւ 3

Փոքր դրամագլխի տերեր կը փնտռուին, խիստ շահաւետ գործի մասին. ընկերութիւն կազմելու: Թիւ 5

Վարձու սենեակներ կը փնտռուի կահաւորութեամբ կամ ոչ: Թիւ 9

Խիստ կարեւոր հաստատութեան մը ամեն կողմէն ներկայացուցիչներ կը փնտռուի: Թիւ 7

Սթոք ապրանքներ ծախելու կամ գնելու ամեն դիրքութիւններ ու յաճախորդներ ունինք: Թիւ 8

Հարուստ տունէ մը սպասուցի կուգուի 10-15 տարեկան Թիւ 9

Կը փնտռուի հարուստ տունէ մը փոքրիկ սպասուցի մը (տատա) գոհացուցիչ գնով: Թիւ 34

Կը փնտռուի տառիքոտ կին մը տան մէջ գործեր կատարելու: Թիւ 35

Շուկայի մէջ ապրանք տեփօ ընելու համար տեղ կը փնտռուի: Թիւ 40

Դրամատեր մը 8000 շան բերող կաշուածներ կը փնտռուի: Վաճառմը կանխիկ: Թիւ 39

Կը փնտռուի Մանիֆաթուրայի առ ու ծախի ծանօթ երկրասարդ մը, բարձր ամսականով ղիմել խմբագրատուն: Թիւ 38

Դաշնակի ուսուցիչ մը կը փնտռուի:

ՊԱՇՏՈՆ ՈՒԶՈՂՆԵՐ

Տանկերէն գրագրութեան համար երկրասարդ մը, պաշտօն կը փնտռուի: Թիւ 42

Ուշիմ պաշտօնեայ մը՝ գիտէ, Հայերէն, Ֆրանսերէն, Գերմաներէն, Իտալերէն, Արաբերէն, եւ Տանկերէն:

Պաշտօն կը փնտռուի.

Պատրաստ է իզմիրէն դուրս աչ երթալ: Ծանօթ է Եւրոպայի գրեթէ բոլոր երկրներուն: Թիւ 43

Սպիտակեղէններ յուսցող կին մը, եւ խիստ համեղ կերակուրներ եփող այրի մը տուններու մէջ աշխատութեան գործ կուգեն Թիւ 4

Քաջ տանկերէն ու ֆրանսերէն գիտցող երկրասարդ մը պաշտօն կը փնտռուի ու եւ քաղաքացիական պաշտօնում մէջ:

Ի պահանջ հարկին երաշխաւոր աչ կրնայ տալ:

ԶԱՆԱԶԱՆ

Տուն ծախելու կամ գնելու համար, բոլոր պաշտօնական գործողութիւնները կ'ետ առ կ'ետ կատարելու դիրքութիւններն ունինք դիրքամատչելի գնով:

Դրամատեր եւ ուշադրութիւն առնիքէն օգտուեցէք:

Ծախու է քօքարեայք՝ Արապտերէ, 1000 արտաւար ագարակ մը, հարուստ ձիթենիի պտղատու ծառերով եւ 45 արտաւար այգիով: Որոնց նիւղակը դեռ մօր չիմուած է չքեղօրէն:

Զմիւռնիոյ ամբողջ Թաղերու մէջ դիրքամատչելի գնեցով վարձու տուններ եւ սենեակներ կը գտնուին մեր տրամադրութեան տակ: Թիւ 12

Հանքային մետաղներու խիստ ճետաքրքիր եմ: Թիւ 14

Ամեն տեսակ մեքենաներու յանձնարարութիւններ կ'ստանանք: Թիւ 15

Սկենմաթօկրափի գործակալութիւն մը արժեթուղիներու վրայ ընկերութիւն մը ճիմել կ'ուզէ: Մասնակցիլ փափաքողք դիմել: Թիւ 11

Կը ծախուի աման գնով, Հայերէն Զուճարէն եւ Եւրոպական չեզուններ գրող ձեռքի մեքենայ մը:

Ո'ւրէ ապահովագրութեան արձանագրուելէ առաջ խելացիութիւն է գալ խորհրդակցիլ մեզ հետ, որմէ ոչ մի ակնկալութիւն կ'սպասենք:

Կուգէք նեղութիւնը յանձն չառնել չենքերու. նորոգութեան կամ վերաշինութեան համար, պէտքիցիլ գործողութիւնները կատարելու, դիմեցէք խմբագրութեան:

Դրամի պէտք ունեցողներուն աչքը չ'ույս. կառավարական օրհրաց համաձայն եւ (պի վեֆայ)ի դրութեամբ փափաքողներուն դրամ կրնանք տալ:

« ԻԶՄԻՐԼԻ » Ի ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

Թերթիս ազդարարութեան գործակալութեան միակ նպատակն է, միշտ օգտակար հանդիսանալ հասարակութեան, հայրայթելով իւրաքանչիւրի ճաշակի համեմատ պաշտօնեայ եւ գործ, Դրամատերերու շահաւոր կաշուածներ, կաշուածատերերու դրամ եւլլն:

Անոնք որոնք իրենց զբաղման պատճառաւ չեն կրնար խմբագրատուն աչցելէ, իւր հանին երկտողով մը մեզ խմացնել իրենց ո'ւրէ գործին կատարման հմր:

Փափագողք կրնան ղիմել խմբագրատուն. կեսօրէն միւլլեւ. Ժամը 2

Արտօնատեր ԹԱԿՈՐ ՇԵՔԵՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ ՕՍՄԱՆԻԷ

4000 ոսկինոց ֆերման մը կը ծախուի, կեդրոն տեղ. Շենքը կը նայի երեք շուկայի վրայ: Թիւ 19

Մեծ դիրքութիւն Դերմակուցիներուն եւ Դերմակներուն:

Ստեղծներու, ժուռնալներու ամեն տեսակները աշխարհիս ամեն կողմէն բերել կուտանք, միշտ մօր, օրը օրին. բիացալէն շատ աւելի աման, ապարանքներ կ'առնենք առանց կանխավճարի, անգամ մը փորձելով պիտի համոզուիք:

Ստակ եւ դիրք շահելու խիստ յարմար առիթ մը:

Մեր ազգայիններէն մին իր երկրը վերադառնալու պատճառաւ պիտի ծախի իր պատմահանքի եւ Հոսիսիմեանց վարժարանի փողոցներու վրայ նայող, Հայ երկրասարդութեան խիստ ծանօթ սրճարանը իր բոլոր կանկարասիներով:

Շատ աւելի աման պիտի տայ անոր որ կը յուսայ գոհացնել տալ իր մշտնջենական բացմաթիւ յաճախորդները որոնցմէ շահած պիտի մեկնի: Թիւ 39

Մեր գաւառի աղքատ կիները չոկ չաչ ու նստիլ ողբալ գիտեն իրենց սեւ ճակատագրին վրայ առանց մօր կամ հնար մը կարենալ խորհելու:

Հոս հարիւրաւոր հայ հարուստ տուններ ունինք որոնք սպասուցի խոհարարութի, ստնտու եւլլն. Կը փնտռուի ամեն տարիքի յարմար գործեր ցոյց տալու... եւ մենք սակայն, մեր բնութիւնն է դարձած կարծես, կը նախընտրենք մուրալ, փոխանակ քաջի նման աշխատելու:

Յարգոյ բոլոր յաճախորդներուն, նոր ու մարտը հագուելն փափագելուն, մասնաւորապէս նոր մասնահնդ մը բացած եմ, իրենց հագուատները առնուած 15 օրը անգամ մը մաքրելու արդուկելու եւ իրենց տունները յանձնելու համար բոլորովին ձրի:

ԴԵՐԶԱԿ. Ս. ՍԱԶԱԿԵԱՆ
Ֆրանկաց Թաղ. Թիւ տըրօզ Թիւ 14

ՍԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱԶԵԻ ՀՈՎԱՆՈՑՆԵՐՈՒ ԽՈՐԵՆ ՌՈՒՄԵԱՆ

Կը փութամ յայտնել արգոյ յաճախորդացս թէ վաճառատանս մէջ ունինք պատրաստ ամեն տեսակ տոկուն ու ընտիր արական եւ իգական հովանոցներ, պատի եւ գրպանի ժամացոյցներ, շոթաներ, (ոսկի, արծաթ, սեւ եւ նիքել տեսակաւոր) ակնոցներ, դպրոցական պաշտօնական, զանազան մետով պատուէր (կաշի, քէթէն եւ մուշամպա) նորածու մեծ ու փոքր Սակառներ, Գաւազաններ:

Վաճառատանս վրայ գաղափար մը կազմելու համար բաւէ մի անգամ աչցելէ եւ տեղեկանալ թէ՛ տեսակներուն ընտիրութեան եւ թէ՛ գիններու արժանութեան մասին:

ԽՈՐԵՆ ՌՈՒՄԵԱՆ

ԴԻՐԵԾԵՐ

Այ-Երկի փողոց ֆէյթմալոյցարի անկիւնի վաճառատունը Եւ. 86 եւ 88. Կը ծախուի թէ՛ մեծաքանակ եւ թէ՛ փոքրաքանակ:

Ամբցելի գիններով
ԱՄԷԼ ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ԲԱՅԱՌԻԿ ԶԵՂԶ



Ա. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԻԶՄԻՐ

Քարափ, Մարր օթելի անցքին մէջ

ԱԼԷԲԱՆԴՐԻՈՒ

Սարափիլէ փողոց Վիքթոր Սանանիա

Ամեն տեղի համար տոմսակնէլ, մասնաւորաբար Ամերիկայի համար խիստ աման գինեղով կը տրուի:

Ապահով եւ արագ փոխադրելու պայմանաւ, Ռոյ-տոյ եւ Եգիպտոսի համար ծրարներ եւ աւանդներ կը նորոգուին:

Յանձնարարութիւն ամեն տեսակ ապրանք:

Համբարներու համար մաքուր եւ հագուտակ նաւակներ վստահելի եւ կրթեալ նաւաւարներ միջոցաւ:

ՍԵԿՆՈՒՄ ԻԶՄԻՐԷ

Եգիպտոս — 15 օրը անգամ մը Ռումանականով:
Պոլիս — ամեն Շաբաթ օրը խաւաքանով:
Մերսին — 15 օրը անգամ մը Ռումանականով:

ԿՐԿԵՍ

ԲԱՐՔԵՆՈՆ ԲԱՏՐՈՆԵՆ ՍԷԶ

Այսօր մեծ ցերեկոյթ եւ ամեն գիշեր ժամը 9ին խիստ չքեղ ներկայացուցներ տեղի պիտի ունենան ճարպիկ արուեստագետներու կողմէ:

ՅՈՎԱԼԷՓ ԷԼԱԿԵՕԶԵԱՆ

Մասնաձիւղ Ռեմիլի, Բօսթայի եւ ամեն տեղի դրոշմաթուղթերու:

Բէշթըմալոյցար պաշտ, Իզմիր

Յովսէփ Էֆ. Էլակեօեան, ընկերութիւն մը կազմած է ամիսը 5 դրուց (20 մեթալիք) տալով մինչեւ ամսագլուխ, տեղ ըլլալու Բրետի Ծօնսի Գիթի-սիէնի եւ Ռումելի Շմէնոյֆերի վիճակահանութեան տոմսակներու:

Ով որ կը փափաքի պէտք է ղիմէ նոյնին եւ բացատրութիւն ստանայ: